

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հովհ. Թումանյանի ծննդյան 150-ամյակին

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԵՎ ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

ՎԱՉԱԳԱՆ ԱՎԱԳՑԱՆ

Հովհաննես Թումանյանը Արշակ Չոպանյանի համար եղել է մեծագույն հարգանքի ու պաշտամունքի առարկա¹: Թումանյանն էլ խորին ակնածանքով ու սիրով է վերաբերվել Չոպանյանին: Ճիշտ է, թեև նրանք հանդիպել և մտտիկից ծանոթացել են միայն 1908 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, երբ կաթողիկոսական ընտրությունների կապակցությամբ Չոպանյանը որպես Մուշի և Շապին Գարահիսարի պատգամավոր Պոլսից ժամանել էր Կովկաս² (կաթողիկոս ընտրվեց Մատթեոս Իզմիրլյանը), սակայն նրանց ծանոթությունը շատ արագ վերաճել է մտերմության ու բարեկամության՝ միշտ ջերմաշունչ ու սրտակից: Ու թեև այդ հանդիպումների մասին հուշեր չեն գրվել, սակայն հուշերից թանկ մի մասունք է մնացել՝ երկու լուսանկար. մեկում՝ Հ. Թումանյանը Չոպանյանի հետ, իսկ մյուսում՝ երկուսով՝ Ավետիք Իսահակյանի, Կոմիտասի, Վրթանես Փափագյանի, Ղազարոս Աղայանի և Գևորգ Բաշինջաղյանի հետ՝ վերջինիս արվեստանոցում³: Այդ օրերի ջերմագին հանդիպումներից մեկի վերաբերյալ մնացել է նաև Թումանյանի մի վկայությունը. 1908 թ. դեկտեմբերի 11-ին Թիֆլիսից Մարիամ Թումանյանին հասցեագրած նամակում նա գրում է, որ երեկոյան գնալու է Չոպանյանի դասախոսությունը լսելու, «որ սիրո քանաստեղծության մասին է լինելու», և ապա հաղորդում. «Եվ առայժմ էլ ինքը՝ Չոպանյանը, հոս-մոտս է, ու խմում ենք Ձեր կենացը» (էջ 55-56):

Մինչև Ա. Չոպանյանի Թիֆլիսից հեռանալը Թումանյանը դեկտեմբերի 23-ին որդու՝ Մուշեղի հետ ձերբակալվում է և բանտարկվում Մետեխում⁴: Բանտարկվել էին նաև Ավ. Իսահակյանը և ուրիշներ: Չոպանյանը, անհանգստացած կալանավորների, մասնավորապես Թումանյանի և Իսահակյանի ճակատագրով, 1909 թ. հունիսին Մատթեոս

¹ Տե՛ս Կ. Դավթյան, Արշակ Չոպանյան, Եր., 1987, էջ 407:

² Տե՛ս Ա. Չոպանյան, Նամականի, Եր., 1980, էջ 418, Կ. Դավթյան, նշվ. աշխ., էջ 317, Հովհ. Թումանյան, ԵԼԺ: Տասը հատորով, հ. 10, Եր., 1999, էջ 498: Այսուհետև այս գրքից հղումները կտրվեն շարադրանքում փակագծերում նշելով միայն էջը:

³ Տե՛ս Լ. Հախվերդյան, Թումանյանը և իր ժամանակը, Եր., 1995, 96-րդ և 97-րդ էջերի միջև տեղադրված առաջին և երկրորդ լուսանկարները:

⁴ Տե՛ս Նվ. Թումանյան, Հուշեր և գրույցներ, Եր., 1969, էջ 93-95, Լ. Հախվերդյան, նշվ. աշխ., էջ 31, 32:

Իզմիրյան կաթողիկոսին ուղղած նամակում «խորհուրդ է տվել միջամտել Նիկոլայ Երկրորդ կայսեր առջև՝ հայ կալանավորներին ազատելու կալանքից»⁵: Չոպանյանը գրում է. «Մեծ ուրախությամբ իմացա այն սիրավիր ընդունելությունը, զոր Ջարը Ձեզ շնորհել է... Արդյոք Ձեր տեսակցության մեջ կարելի եղավ բառ մ'ըսել Կովկասի ձերբակալությանց մասին, ձերբակալվածներուն մեջ կան անձնավորություններ, որ թանկագին են ամբողջ հայության համար, Հովհաննես Թումանյան և Ավ. Իսահակյան աննման բանաստեղծները (ձերբակալված 7-8 ամիս առաջ)... Ինչու այս մտավոր ու մարդասիրական գործիչները թշնամի կնկատվին Ռուսիո և կխոշտանգվին: Այս բոլորիս կիմանամ, որ Թումանյան արձակվել է, երանի թե լուրը ճիշտ ըլլար: ...Ինչ մեծ բարիք ըրած պիտի ըլլայիք հայության, եթե կարենայիք ստանալ իրենց (և անշուշտ բոլոր ձերբակալվածներուն) ազատումը»⁶:

Ինչպես հասկանում ենք նաև Թումանյանի՝ 1909 թ. հուլիսին Չոպանյանին գրած նամակի բովանդակությունից, դեռ Թիֆլիսում գտնված ժամանակ Չոպանյանը, մտահոգ բանաստեղծ ընկերոջ վիճակով, շարունակ հետաքրքրվել է նրանով, իսկ մեկնելուց հետո նամակներով (չեն պահպանվել. տե՛ս էջ 498) մխիթարել, քաջալերել է իր բարեկամին, արտահայտել իր «սրտի ցավը, ազնիվ, սիրելի ընկերի սրտի ցավը» (էջ 79):

Այդ նույն նամակում Թումանյանը պատմում է իր վիճակից, մի տեսակ բացվում սրտակից ընկերոջ առջև. «Գալով բանտին, պետք է ասեմ, որ շատ խաղաղ էի հոգով: Արդեն աշխարհքին մի քիչ փիլիսոփայորեն եմ նայում, մյուս կողմից էլ շատ էր հանգիստ ինդձս. ոչ մի այնպիսի գործ չունեի, որ դեմս բերեին ու ամաչեի կամ իրավունք ունենային պատժելու...»: «Աշխարհքին մի քիչ փիլիսոփայորեն» նայելը հայ պոեզիային տվեց անգնահատելի մի արժեք՝ «Վայրէջքը». պոետը նվիրեց այն իր ծննդյան 40-ամյակին, որ բանտում է լրացել 1909-ի փետրվարի 19-ին:

Նամակի հետագա շարադրանքը մի լրացուցիչ անգամ լույս է սփռում մեր մշակույթի երախտավորի ապրած կյանքի մի հանգուցային էջի վրա, որը նա իր համար կարևորագույնն է համարել⁷: Խոսքը վերաբերում է այն պայքարին, որ Թումանյանը 1905-1906 թվականներին ծավալեց հայ-թուրքական ընդհարումները կասեցնելու համար: Նամակի այդ ինքնաբնութագրական տողերում երևում է նաև մտերիմին իր ապրումները, մտորումները փոխանցելու անմիջականությունը. «...Միշտ եղել եմ խաղաղության ու հաշտության ետևից, կանգնեցրել եմ սկսված ընդհարումները և գործել եմ շարունակ սպիտակ դրոշակով, որը, այժմ, երբ ամեն բան անցել է, հայտնվում է, որ միակն է եղել ամբողջ Կովկասում» (էջ 79):

⁵ «Արշակ Չոպանյանի անտիպ նամակներից», «Բանբեր Հայաստանի արխիվներին», Եր., 1965, № 2, էջ 50:

⁶ Նույն տեղում, էջ 55-56:

⁷ Տե՛ս **Հր. Թամրազյան**, Բանաստեղծության հազարամյա խորհուրդը, Եր., 1986, էջ 83:

Նամակում Թումանյանը իր ավստասանքն է արտահայտում, որ Չոպանյանի հետ իրենց համատեղ անցկացրած օրերը Թիֆլիսում շատ կարճ եղան՝ անելով մի խոստովանություն, որում կան նաև տառապանք, նաև կենսական գրգիռ, նաև տագնապ. «Տեսնենք հնարավոր է լինելու, վերջապես, մի խաղաղ օր տեսնելու, պարապելու, թե ինչպես խանգարված ու շշկլված եկանք, էնպես էլ գնալու ենք» (էջ 80):

Տարիներ անց՝ 1921 թ. վերջերին, երբ Թումանյանը որպես ՀՕԿ-ի նախագահ Հայաստանի օգնության գործը կազմակերպելու նպատակով մեկնում է Կ. Պոլիս, Չոպանյանը Փարիզից նամակ է ուղղում նրան, որում անկաշկանդ անմիջականությամբ հիշում է թիֆլիսյան արդեն հեռավոր այդ օրերի հանդիպումներից մեկի մասին: «Թիֆլիս ես օր մը Ձեզի ըսի,- գրում է Չոպանյանը,- որ «հոսոս» իրապես կնշանակե տաքարյուն, սիրուն, gentil (ազնիվ- Վ. Ա.) մարդ, և Ձեր կենաց ալ բաժակ պարպեցի իբր ամենն սիրուն հոսոսին այս իմաստով գոր երբեք տեսած ըլլամ: Կհուսամ որ հիմա հաստատած եք որ ըսածս ճիշդ է»⁸:

Այդ նույն նամակում նախ ավստասանք հայտնելով, որ Պոլսում չգտնվելու պատճառով չի կարող հանդիպել սիրելի բարեկամին, Չոպանյանը այնուհետ արտահայտում է իր ջերմ զգացումները Թումանյանի նկատմամբ, ազնիվ մեծարանքի ու հիացմունքի խոսք ուղղում նրան. «Որքան կցավիմ որ Պոլիս չեմ այս միջոցին, իմ քաղաքակիցներու հետ տեսնելու համար Ձեր թանկագին անձին մեջ վերածնված Հայաստանի, մեր բազմաշարժար բայց կենդանի Հայրենիքի պատգամաբերը, ինչպես և մեր երեկվան ու այսօրվան գերագանցապես «հայ» բանաստեղծը» (էջ 142):

Թիֆլիսյան հանդիպումը եղավ առաջինն ու վերջինը. Թումանյանն ու Չոպանյանը այլևս չհանդիպեցին, սակայն երկուստեք հետաքրքրությունը իրարով, մեկմեկու գործունեությամբ մնաց միշտ, հեռվից հեռու նրանց մտերմությունը շարունակվեց: Այսպես օրինակ, ինչպես իմանում ենք նրանց նամակներից, Չոպանյանը Փարիզից «Գիր» գրախանութի համար Թումանյանի հասցեով գրքեր է ուղարկել⁹, իր «Պեշիկթաշլեանի կեանքն ու գործը» գրքի երկրորդ տպագրության համար նրա միջոցով դիմել է Թիֆլիսի հրատարակչական ընկերությանը¹⁰, Թումանյանն էլ, օրինակ, Ղ. Աղայանի, Վ. Փափազյանի հետ կազմած «Հայ գրողներ» (Թիֆլիս, 1910) հավաքածուի մեջ արևմտահայ հեղինակներից 26 բանաստեղծություն դրել է Չոպանյանից¹¹:

Եվ հետո, ինչպես հայտնի է, 1910 թ. Ա. Չոպանյանը հրատարակեց «Նաղաշ Յովնաթան աշուղը եւ Յովնաթան Յովնաթանեան նկարիչը» գիրքը՝ համառոտ մի առաջաբանով, որում գնահատում և խնամքով

⁸ Ա. Չոպանյան, Նամականի, էջ 142:

⁹ Տե՛ս Ա. Չոպանյան, Նամականի, էջ 103:

¹⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 126:

¹¹ Տե՛ս նույն տեղը, էջ 261:

վեր է հանում թե՛ բանաստեղծի (Ա մաս) և թե՛ նկարչի (Բ մաս) ստեղծագործությունների արժանիքները: Այս հատորը դարձավ Նաղաշ Հովնաթանի վերաբերյալ առաջին գիտական ուսումնասիրությունը, որի լույս տեսնելուց հետո մեր բանասիրության մեջ բանաստեղծի երգերի հրատարակության, մասամբ և ուսումնասիրության գործում սկսվեց մեծ աշխուժացում: Հայ մտավորականներից շատերը շտապեցին իրենց դրվատանքի խոսքը հղել մեծ բանասերին¹²: Հիացական խոսքով հանդես եկավ նաև Հովհ. Թումանյանը՝ գրելով «մի թռուցիկ թեթև հողված» (իր արտահայտությունն է), որն առաջին անգամ տպագրվեց «Հորիզոնի» 1911 թ. ապրիլ-մայիսյան համարներում (№№ 90, 91, 92 և 99), իսկ հետագայում՝ 1916 թ., մասնակի փոփոխություններով հրատարակվեց առանձին գրքուկով:

Պետք է միայն տեսնել, թե ինչ ջերմ, հիացական տոնով է Թումանյանը բացում իր խոսքը Չոպանյանի մասին՝ նկատի ունենալով հատկապես նրա՝ մեր հին գեղարվեստի նկատմամբ ունեցած մեծ սերը և ցուցաբերած ուշադրությունը, «մեր մեռած տաղանդների կենդանի գործերը» որոնելու և հանդես դնելու շնորհաշատ գործը. «Երբ ասում են թե՛ Ա. Չոպանեանի ձեռքի տակից դուրս է եկել մի որ և է գիրք, ես միշտ երևակայում եմ սիրով ու խնամքով կատարած մի գործ, ճաշակով ու գեղեցիկ նոյն իսկ գրքի շապիկն ու շապկի գոյնը: Էս տեսակ մի գիրք է և նրա «Նաղաշ Յովնաթան աշուղը և Յովնաթան Յովնաթանեան նկարիչը»... Եւ ահա էսօր, Ա. Չոպանեանի շնորհիւ, յարութիւն առած, կամ ինչպէս ինքն է ասում, անարդար մոռացումի խաւարէն հանած, մեր առաջն են էս երկու ազնիւ ու հարագատ դէմքերը...»¹³: Վերլուծելով Հովնաթանի սիրո, գարնան երգերը՝ Թումանյանն ինքն էլ դրանք համեմատում է Քուչակի և Սայաթ-Նովայի նմանատիպ երգերի հետ և անում մի շարք հետաքրքիր դիտարկումներ: Ճիշտ է, որոշ հարցերում Թումանյանը առարկում կամ ուղղում է Չոպանյանին, մասնավորապես առանձին բառերի ու ձևերի աղավաղումների, շատ բառերին տված սխալ բացատրությունների առնչությամբ, սակայն բանաստեղծն իր հողվածը ավարտում է գովեստի շնորհակալ խոսքով. «Սակայն էս և սրանց նման նկատողութիւնները գալիս են մի բան ասելու, որ հեշտ չի... միանգամից անթերի վերականգնել մի գործ, որ աղաւաղել ու աղճատել են հարիւրաւոր ձեռքեր ու հարիւրաւոր տարիներ: Եւ, գիտակցելով էս ամեն դժուարութիւնները, լիասիրտ շնորհակալ պէտք է լինենք պ. Չոպանեանից, որ իրար ետևից մոռացութեան խաւարից հանում է էս տեսակ գործեր ու դնում մեր առաջը...»¹⁴:

Այստեղ ուշագրավ է, որ Թումանյանը անվերապահորեն պաշտ-

¹² Տե՛ս Կ. Դալլաքյան, նշվ. աշխ., էջ 196-197:

¹³ Հովհ. Թումանեան, Նաղաշ Յովնաթանը և նրա, Քուչակ Նահապետի ու Սայաթ-Նովայի սերը, Թիֆլիզ, 1916, էջ 3-4:

¹⁴ Նույն տեղում, էջ 32:

պանում է Չոպանյանի քննադատությունը Խրիմյան կաթողիկոսի նկատմամբ՝ նկարիչ Հովնաթանի՝ Ս. Էջմիածնի տաճարը զարդարող գեղեցիկ գործերը փչացնելու, ոչնչացնելու համար, և ինքն էլ արտահայտում իր գայրություն ու ցավը¹⁵: Չի ուշանում Ա. Չոպանյանի փոխադարձ շնորհակալական նամակը Թումանյանին՝ թվագրված «1911 թ., հունիսի 3, Փարիզ»։ «Սիրելի բարեկամս, մեծ հաճությամբ և հետաքրքրությամբ կարդացի Ձեր ընդարձակ հոդվածը Նաղաշ Հովնաթան գրքիս մասին: Շնորհակալ եմ Ձեր բարեկամական տողերուն համար»¹⁶: Այստեղ հարևանցիորեն նկատենք, որ նամակագիրները միմյանց ողջունելիս իրենց խոսքը սովորաբար սկսում են «Սիրելի», «Սիրելի բարեկամս» հղումներով և ավելի հաճախ ավարտում «Ընդունեցեք սրտագին ու կարոտալի համբույրներս» (Ա. Չոպանյան), «Սրտալի համբույրներով», «Ընկերական բարևներով ու համբույրներով» (Հ. Թումանյան) վերջընթեր արտահայտություններով, որոնք անկասկած ասված են սրտանց՝ առանց որևէ ձևականության:

Ժամանակագրորեն հաջորդ ուղիղ անդրադարձը Թումանյանին, որ հանդիպում է Չոպանյանի նամակներում, Փարիզից 1912 թ. դեկտեմբերի 12-ի՝ Լեոյին հասցեագրած նամակով բանաստեղծին ուղղած ջերմ բարևն է¹⁷:

Գուցե անձնական, ազգային-հասարակական հայտնի ծանր հանգամանքների պատճառով (Առաջին համաշխարհային պատերազմ, Երևան, գաղթ, 1918 թ. Թումանյանի Արտավազդ որդու զոհվելը, եղբայրների սպանությունը և այլն) հետագայում նրանց միջև կապը առժամանակ թուլացել է, համենայնդեպս ժամանակով հաջորդ հայտնի նամակը գրված է Չոպանյանի կողմից 1921 թ. դեկտեմբերի 1-ի ամսաթվով, որին մասամբ անդրադարձ եղավ վերևում: Այդ նույն նամակում Չոպանյանը, մտահոգ մեր երկրին ու ժողովրդին, մասնավորապես Կիլիկիայի հայությանը սպառնացող քաղաքական տագնապալի իրավիճակով, այնուամենայնիվ հույս է հայտնում մեր ժողովրդի ապագայի նկատմամբ և իր լավատեսությամբ ասես ուզում է վարակել և բանաստեղծ ընկերոջը: «Մեր ազնիվ ժողովուրդը թող չհուսահատի,- գրում է նա.- հուսահատությունը ավելի մեծ աղետ է քան կոտորածը, սովը, համաճարակները. այս տագնապի շրջանը իր վերջը պիտի ունենա, և այնուհետև մեր ազգային կյանքը մշտական վերելք մը պիտի ըլլա»¹⁸:

Ինչպես նկատեցինք, մեծ չէ այն նամակների թիվը, որ պահպանվել ու հասել են մեզ մեր մշակույթի այդ երկու մեծ գործիչների միջև անձնական նամակագրությունից¹⁹, սակայն այստեղ կարևորը քանակը

¹⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 4-5:

¹⁶ Ա. Չոպանյան, Նամականի, էջ 103:

¹⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 116:

¹⁸ Ա. Չոպանյան, Նամականի, էջ 142:

¹⁹ Շատ նամակներ կորել են, որոնց մասին կարելի է միայն տարբեր ակնարկներից ու վկայություններից իմանալ. օրինակ, տե՛ս Ա. Չոպանյան, Նամականի, № 90 նամակը (էջ

չէ, այլ այն, թէ ինչ մասնավոր սիրով ու ջերմությամբ են գրված դրանք, առավել, թէ ինչ վերաբերմունք և գնահատանք են նրանք ունեցել միմյանց նկատմամբ: Գնահատանքի ևս մեկ ակնառու արտահայտություն է այն փաստը, թէ ինչպէս 1922 թ. Պ. Դուրյանի մահվան 50-ամյա տարեկիցի կապակցությամբ Փարիզում կազմակերպված գրական-գեղարվեստական հավաքույթի ժամանակ վաղամեռիկ բանաստեղծի մասին իր բանախոսությունը Չոպանյանը սկսել է Հովհ. Թումանյանի՝ Կ. Պոլիս առաքելության և այնտեղ ծավալված գրական-հասարակական աշխատանքների ու շահագրգռվածությունների մեծարմամբ. «Պ. Թումանեան, ըսաւ բանախօսը, չբաւականացաւ միայն հաց ուզելով, որովհետեւ մարդ միայն հացով չապրի, այլ արուեստով և հոգիին սնունդով ալ, և կազմուեցաւ Հայ Արուեստին Տունը, որուն շուրջ բոլորուած են Կ. Պոլսոյ գրական և գեղարուեստական բոլոր դէմքերը: Հակառակ մեր բոլոր դժբախտութեանց պէտք չէ մոռնալ որ ազգային արուեստը ամենէն էական ուժն է, որ ազգ մը ունի: Թումանեան հիմնելով Ազգային Արուեստի Տունը, ուզեց վառ պահել հայ արուեստի ջահը և ցոյց տալ, թէ հայ մտաւորականութիւնը դեռ կ'ապրի»²⁰:

Հետաքրքիր է իմանալ, որ Թումանյանի մահվանից օրեր առաջ՝ մարտի 19-ին, Փարիզում տեղի Հայ համալսարանական միությունը, ի պատիվ «մեծ բանաստեղծ և ազգային գործիչ» Թումանյանի, մայրաքաղաքի սրահներից մեկում կազմակերպում է գրական-գեղարվեստական մի երեկույթ, որին մասնակցում է նաև Ա. Չոպանյանը՝ կարդալով բանախոսություն բանաստեղծի կյանքի և գրական գործի վերաբերյալ: Չոպանյանը, ինչպէս տեղեկանում ենք, «վեր հանելով անոր արժեքը իբրև ժողովրդական բանաստեղծ», իր խոսքը հաճախ համեմատ է գրողի տարբեր գործերի ընթերցումներով: Թումանյանին ներկայացնելով նաև իբրև հասարակական գործիչ, որ «մեծ յարգ ու պատիւ կը վայելէր Ազգային բոլոր շրջանակներուն մէջ», Չոպանյանը զեկուցման վերջում հաղորդում է, որ Թումանյանը այժմ ծանր հիվանդ է և տեղափոխվել է Մոսկվա՝ բուժվելու²¹: Ընդամենը օրեր անց՝ մարտի 25-ին, Չոպանյանին է հասնում բանաստեղծի որդու՝ Համիկի չարագույժ հեռագիրը. «Քսաներեքի երեկոյեան հայրիկս վախճանեց Մոսկուայում»²²: Այդ առիթով ահա Չոպանյանը որոշում է լրագրական մի փոքրածավալ հոդվածով անդրադառնալ մեծ բանաստեղծին: Մենք չգիտենք, թէ Հ. Թումանյանի մասին Չոպանյանի կարդացած հիշյալ բանախոսությունը իր

126) և նրան վերաբերող № 3 ծանոթագրությունը (էջ 412), **Հովհ. Թումանյան**, նշվ. աշխ., № 54 նամակը (էջ 79) և նրան վերաբերող № 1 ծանոթագրությունը (էջ 498), № 384 նամակը (էջ 397) և նրան վերաբերող № 1 ծանոթագրությունը (էջ 704), **Կ. Դալլաքյան**, նշվ. աշխ., էջ 336:

²⁰ «Պետրոս Դուրեանի մահուան յիսնամեակի հանդէսը», «Ապագայ», Բարիզ, 1922, թիւ 13, էջ 3:

²¹ Տե՛ս «Յ. Թումանեանի ի պատիւ գրական-ազգային երեկոյթը», «Ապագայ», Բարիզ, 1923, թիւ 17, էջ 3:

²² «Մահ Յովհաննէս Թումանեանի», «Ապագայ», Բարիզ, 1923, թիւ 18, էջ 1:

բովանդակությամբ, վերլուծման իր տրամաբանությամբ որքանով է առնչվում «Ապագայ» թերթում տպագրված այս հոդվածի հետ, սակայն, դատելով բանախոսության վերաբերյալ նույն պարբերականի նախընթաց համարում արտահայտված մտքերից, նաև նրանցից, որ բանախոսությունն ու հոդվածը իրար սահմանակցում են խիստ մոտ ժամանակով, կարելի է ենթադրել, որ այդ բանախոսությունը այս հոդվածի մի տեսակ նախորդող զուգակեր կարող էր լինել: Ինչևէ...

Հոդվածի առաջին տողերում Ա. Չոպանյանը, արտահույզ խոսքերով սգալով անդառնալի կորուստը, իր «անմխիթարելի կսկիծն» է արտահայտում «մեր ամենասիրելի» բանաստեղծի վաղաժամ մահվան պատճառով՝ համոզված, որ նա «դեռ այնքան բան ուներ ընելիք՝ իր քերթողական գործը ընդլայելու և լրացնելու, մեր գրականութիւնը նոր նոր հրաշակերտներով ճոխացնելու համար»²³:

Իր հարգանքի և երախտագիտության բոլորանվեր խոր զգացումներն արտահայտելուց հետո Չոպանյանն անհրաժեշտ է գտնում շատ հակիրճ մատնանշել Թումանյանի ստեղծագործության էական գծերը, այն արժեքները, որոնցով բանաստեղծը հարստացրեց հայ քնարերգությունը:

Առաջին հերթին Չոպանյանը շեշտում է Թումանյանի ստեղծագործության ժողովրդական արմատները, ընդգծում այն իրողությունը, որ գրողի քնարերգությունը գլխավորապես բարձրացել է ժողովրդական նյութի վրա՝ ներառելով մեր ժողովրդի հինավուրց մտածողությունը, մեր ազգային խառնվածքի կարևոր երանգները: Այս իմաստով գրականագետը Թումանյանին համարում է Աբովյանի լավագույն հաջորդն ու նրա գրական ավանդների շարունակողը:

Թումանյանի գրական նորարարությունը, ինչպես ճշմարտացիորեն գտնում է Չոպանյանը, ավելի որոշ է հատկապես մեր բանաստեղծության մեջ քնարակապիկական ժանրի հաստատումով. «Մեր հին ու նոր հմուտ բանաստեղծութեան մեջ քնարական տարրը չափազանց տիրապետող է. սակաւաթիւ են հոն էջեր, ուր գործողութիւն գոյութիւն ունենա... Թումանեան մտցուց գործողութիւնը մեր բանաստեղծութեան մեջ, զարգացուց վիպերգին կարևոր կեանքոտ ճիւղը, և անոր մեջ տուաւ գլուխգործոցներ...»²⁴: Այս նույն միտքն է հավաստում նաև Էդ. Ջրբաշյանը. «Բայց կա մի բնագավառ, ուր Թումանյանի դերը հատկապես մեծ է, բացարձակ իմաստով առաջնակարգ և անփոխարինելի: Դա էպիկական պոեզիայի, պատմողական բանաստեղծական ժանրերի (պոեմի, բալլադի) բնագավառն է: Թումանյանի անունը մեր գիտակցության մեջ ամենից առաջ կապվում է էպիկական լայն ու հզոր պոեզիայի հասկացողության հետ: Այստեղ ոչ մի ուրիշ բանաստեղծ չի կարող մրցել Թումանյանի հետ»²⁵:

²³ Ա. Չոպանեան, Յովհաննէս Թումանեան, «Ապագայ», Բարիզ, 1923, թիւ 19, էջ 1:

²⁴ Նույն տեղում:

²⁵ Էդ. Ջրբաշյան, Թումանյանի պոեմները, Եր., 1964, էջ 5-6:

Չոպանյանը շատ բարձր է գնահատում նաև Թումանյանի լավատեսական ոգին՝ գտնելով, որ մեր ժամանակակից մելամադձոտ բանաստեղծության մեջ նա բերեց «հոգեկան լուսաւոր ու արու առողջութեան» տրամադրություն: «Անոր (Թումանյանի – Վ. Ա.) երգը ուժի, զուարթութեան, հաւատքի, լաւատեսութեան պոռթկում մըն է, պայծառ ու խրոխտ՝ նոյնիսկ ցաւի արտայայտութեան մեջ»²⁶, – եզրակացնում է գրականագետը՝ բանաստեղծի քնարերգութեան մեջ հայտնաբերելով մեր ժողովրդի հոգևոր խառնվածքի համար այնքան խորհրդանշական դարձած կենսասիրութեան ցուցումը, որը բոլոր ժամանակներում իր դրսևորումն է ստացել մեր բանաստեղծութեան մեծերի ներշնչանքի մեջ: Այսպէս, առանց հատուկ զուգահեռներ անցկացնելու Չոպանյանը հայտնաբերում է Թումանյանին Նարեկացու, Քուչակի, Աբովյանի ստեղծագործութեան հետ կապող ընդհանուր հատկանիշը, որը հետագայում ուրիշների կողմից պետք է ստանար կոնկրետ բովանդակություն և ընդգրկվեր բանաստեղծի գեղարվեստական և ազգային նշանակութեան ընդհանուր բնութագրի մեջ՝ դառնալով թումանյանագիտության զինանոցի մի կարևոր բաղադրիչը:

Հոդվածում թեև ակնհայտ է զգացական տարրը, և հաճախ Չոպանյանի խոսքը Թումանյանի նկատմամբ ստանում է քնարական երանգներ, սակայն քննադատը իրեն հատուկ խորաթափանցությամբ գրողի ստեղծագործութեան վերաբերյալ անում է կարևոր և արժեքավոր ընդհանրացումներ, տալիս սեղմ ու դիպուկ գնահատականներ, որոնք, ճիշտ է, այսօր կարող են թվալ ինքնին հասկանալի մի բան՝ բոլորի կողմից ընդունված, համընդհանուր ճանաչում առած, սակայն չնոռանանք, որ Չոպանյանը այդ ամենը ասել է շուրջ հարյուր տարի առաջ: «Այդ անզուգական վիպերգուն,- գրում է Չոպանյանը,- հայ մանուկներուն հրճուանքը կազմող այդ համեղ առակախօսն ու գրուցագիրը, այդ կորովի դիւցազներգակը գմայլելի քնարերգակ մըն էր նաև. ան երգած է հակիրճ, ազնիւ ու նուրբ շեշտերով՝ սիրոյ հեշտանքն ու տանջանքը, մահուան խորհուրդը, կեանքի գեղեցկութիւնն ու ցաւերը, բնութեան (մասնաւորապէս հայրենի բնութեան) թովչութիւնները, ու երգած է մանաւանդ Հայ ազգի դարաւոր եղերական ու հերոսական ճակատագիրը, ժամանակակից հայ պայքարն ու ողբերգութիւնը՝ շարք մը սքանչելի էջերու մեջ, որոնք հզօր խտացումներ, համադրութիւններ են ...»²⁷:

Եվ վերջապէս Չոպանյանը Թումանյանին ներկայացնում է որպէս մարդ ու ազգային-հասարակական գործիչ՝ առանձնակի ուժով շեշտելով թե՛ առաջինը և թե՛ երկրորդը նրա մեջ. «Մարդը Թումանեանի մեջ այնքան հրապուրիչ ու սիրելի էր, որքան գործը: Անիկա մեծ սիրտ մըն էր՝ իր ազգին բանաստեղծութեան եւ իր բարեկամներուն սիրով ամեն րոպէ հզօրապէս բարախող»²⁸:

²⁶ Ա. Չոպանեան, Յովհաննէս Թումանեան, էջ 1:

²⁷ Նույն տեղում:

²⁸ Նույն տեղում:

Հողվածն ավարտվում է այն անմնացորդ հավատով, որ Թումանյանի գործը հավերժորեն պիտի ուղեկցի սերունդներին՝ մշտապես վարակելով լավատեսությամբ, իսկ նրա շիրիմը պետք է ուխտատեղի դառնա՝ հոգեկան առողջություն ու գեղեցիկի ներշնչում պարգևելով այցելողներին²⁹:

Հետագայում, ինչպես իմանում ենք մամուլի տեղեկություններից ու Չոպանյանի նամակներից, նա տարբեր առիթներով տարբեր քաղաքներում ու վայրերում բանախոսություններ է կարդացել Հովհ. Թումանյանի ստեղծագործության վերաբերյալ, ինչպես, օրինակ, 1923 թ. հունիսի 9-ին՝ Սորբոնի մեծ ամֆիթատրոնում³⁰, 1939 թ. հունվարին՝ Մարսելում³¹, 1945 թ. մայիսին՝ դարձյալ Փարիզում՝ Նուբարյան մատենադարանում³², և այլն: Համեմատաբար առատ տեղեկություններ կան Սորբոնում կազմակերպված գրական-գեղարվեստական երեկույթի վերաբերյալ, որը նախագահել է Ալ. Շիրվանզադեն: Հետաքրքիր է իմանալ, որ երեկույթի ընթացքում ճառել են նաև Շիրվանզադեն, Ավետիս Ահարոնյանն ու նրա որդին՝ Վարդգես Ահարոնյանը, Ջաբել Եսայանը և էլի ուրիշներ: Չոպանյանը, ինչպես կարդում ենք հաղորդագրության մեջ, «իր սովորական պերճախօսությամբ» հարգանքի ողջույնը բերելով Թումանյանի հիշատակին, խոսքում հատկապես ընդգծել է գրողի քնարերգության մեր ժողովրդի հոգևոր ներքին խառնվածքի համար այնքան հարագատ կենսասեր ոգու արտահայտությունը, որով էլ նա դարձավ «իր ցեղին ձայնը»³³:

Այսպես, Թումանյանի մահվանից հետո էլ Չոպանյանը մշտապես պահպանեց հետաքրքրությունը գրողի ու նրա ստեղծագործության նկատմամբ, ամեն հնարավոր առիթով շտապեց արտահայտել իր ջերմ վերաբերմունքը բանաստեղծ ընկերոջ հանդեպ: Օրինակ՝ 1923 թ. գարնանը «Նորք» հանդեսի տպագրության կապակցությամբ ողջունելով վերջինիս մուտքը և հակիրճ ներկայացնելով առաջին համարի բովանդակությունը՝ շտապում է տեղեկացնել, որ հանդեսի գրական բաժնի մեջ տեղ են գտել նաև «ողբացեալ Յովհաննէս Թումանեանի վերջին բանաստեղծութիւններէն չորսը, ա՛յնքան խորունկ և գեղեցիկ»³⁴:

Ուշագրավ է նաև, որ Չոպանյանը իրենց առաջին գրական փորձերը անող երիտասարդ շատ հայ ստեղծագործողների «ճշմարիտ ու անմահ բանաստեղծության ճամփան» գտնելու համար մեր շատ մեծերի հետ միասին՝ Նարեկացի, Սայաթ-Նովա, Պետրոս Դուրյան, Մեծարենց, Ավետիք Իսահակյան, Վահան Տերյան, Ե. Չարենց և ուրիշներ, խորհուրդ է տվել կարդալ նաև Թումանյան³⁵: Այս հանգամանքը ևս գալիս է լրացնելու այն անսասան համոզմունքը, որ Թումանյանը Չոպան-

²⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 2:

³⁰ Տե՛ս «Յովհ. Թումանեանի երեկոյթը», «Ապագայ», Բարիզ, 1923, թիւ 29, էջ 4:

³¹ Տե՛ս **Ա. Չոպանյան**, Նամականի, էջ 267:

³² Տե՛ս նույն տեղը, էջ 296:

³³ «Յովհ. Թումանեանի երեկոյթը», էջ 4:

³⁴ **Ա. Չոպանեան**, «Նորք»-ին առթիւ, «Ապագայ», Բարիզ, 1923, թիւ 23, էջ 1:

³⁵ Տե՛ս **Ա. Չոպանյան**, Նամականի, էջ 216:

յանի համար քերթողական մեծություն էր:

Այսպես ահա հոլովվող տարիների շղթայում՝ շուրջ տասնհինգ տարի (1908-1923 թթ.), հարազատորեն, փոխադարձ սիրով ու համակրանքով ընկերակցեցին մեր մշակույթի մեծերից Հովհաննես Թումանյանն ու Արշակ Չոպանյանը: Ցավոք, նրանք բարեբախտություն չունեցան տևական ժամանակ վայելելու միմյանց ներկայությունը, սակայն իրենց սրտամոտ բարեկամությունը պահեցին ու խորացրին նամակագրությամբ, միմյանց արժևորելու, միմյանց նկատմամբ հոգատար վերաբերմունք դրսևորելու բազում տարբերակներով: Այդ սրտակից մտերմությունը պիտի բացատրել թե՛ երկու անձանց մարդկային փոխադարձ համակրանքով, թե՛ հարազատ ժողովրդի ճակատագրի վերաբերյալ նույնացող խորհրդածություններով, թե՛ նույն ցավի, նույն տազնապի մտահոգություններով ու նույն երազների արտահայտությամբ և թե՛ գաղափարական ու գրական-գեղագիտական հետաքրքրություններով:

Բանալի բառեր – *Հովհաննես Թումանյան, Արշակ Չոպանյան, հոգեկցություն, ընկերություն, նամականի, հուշ, վկայություն, բանախոսություն*

ВАЧАГАН АВАГЯН – Из взаимоотношений Ованеса Туманяна и Аршака Чопаняна. – Статья впервые в сжатой форме даёт представление о тёплых дружеских отношениях двух выдающихся деятелей армянской культуры, об их тесной духовной связи, которая объясняется как обоюдной симпатией, так и схожими взглядами на судьбу родного народа и во многом общими идейными установками и литературно-эстетическими интересами. Существенное место отведено переписке писателей, затрагивающей важнейшие национальные, общественные и литературные вопросы и раскрывающей их человеческую близость.

Ключевые слова: *Ованес Туманян, Аршак Чопанян, привязанность, дружба, собрание писем, воспоминания, свидетельство, речь*

VACHAGAN AVAGYAN – From Relationships between Hovhannes Tumanyan and Arshag Tchobanian. – For the first time, the article attempts to present briefly the relationships between two prominent figures of Armenian culture, Hovhannes Tumanyan and Archag Tchobanian – mutually warm and friendly, sharing ideological, literary and aesthetic interests, concerns about the fate of their native people. The author pays special attention to their correspondence, revealing beautiful stories of two writers' hearty friendship and impressive examples of national, literary and human compassion.

Key words: *Hovhannnes Tumanyan, Arshak Chobanyan, affection, friendship, collection of letters, memories, testimony, speech*

Ներկայացվել է՝ 02.05.2019

Գրախոսվել է՝ 18.06.2019

Ընդունվել է տպագրության՝ 28.06.2019